ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Ն. Բ.

Քսաներորդ դարասկիզբը հայ քաղաքական գիտակցությանը հույս էր ներշնչում, որ մերձավոր ապագայում պատասխան են ստանալու ազգային կյանքի բարդ ու խճճված բազում հիմնահարցեր: Նոր հարյուրամյակի առաջին իսկ համարում «Մշակ» օրաթերթը իր խմբագրական հոդվածում, ի լուր ամենքի, ազդարարում էր, թե առաջիկա քսաներորդ դարը, որի մեջ մենք ենք այսօր, պետք է պատասխան տա մեր հասարակական հարցերին ու լուծի մի շարք գորդյան հանգույցներ[1]:

Ժամանակի ամենազանգվածային խոստում-կանխատեսությունը վերաբերում էր ոչ միայն Հայկական հարցի քաղաքական լուծումների հեռանկարին, այն հարցի, որը XIX դարավերջյան ապարդյուն ջանքերից հետո անցավ XX դարասկզբի ազգային օրակարգ, այլև հանուն հայ ազգային համախմբման մտավոր շարժմանը, որը պատմական փոփոխված հանգամանքներում էլ մնում էր ազգային գոյության որոշիչներից մեկը:

Դարերի հնություն ունեցող հայ ազատագրական լեգենդի փլուզման և ազգային գոյության հարցականի ճակատագրական-աղետավոր աբդուլհամիդյան 1890-ական թվականների հայկական կոտորածների և երիտթուրքական 1910-ական թվականների Հայոց ցեղասպանության տարիներին այլևայլ գաղափարական մտայնությունների շարքում ձևավորվում էին ստեղծված կացությունից ելք գտնելու ուղիները, որոնք կոչված էին ժողովրդի ապագա ճանապարհին անվթար անցնելու հույս և հավատ:

Նյութական և քաղաքական հայրենիքից զրկված ժողովրդի համար ազգի համախմբման ծրագիրը ոչ միայն ռոմանտիկների կառուցած անմարմին ցնորքը չէր, այլ մեծագույն աղետների մեջ հայտնված հոծ գաղթականության փրկության անդուլ որոնումնե-րի տրամաբանական ծնունդը: Բնորոշ է, որ 1890-ական թվականների աբդուլհամիդյան կոտորածների ժամանակ անգամ ավելի ու ավելի հաստատուն էր դառնում իր գոյությունը Ռուսաստանի հովանու ներքո պահպանելու՝ հայության ընդհանուր մղումը: Տակավին 1894 թ. իր հիշատակարանային գրառումներում երիտասարդական բնորոշ անկեղծությամբ Ավետիք Իսահակյանը գրում էր. «Շատ, շատ լավ կլինի, որ Ռուսաստանը գնա և ողջ Հայաստանը տիր». գոնե մեր ժողովուրդը էլ չի ջարդվի սովից ու

---

[1] *Մշակ, 1901, N 1:*

սրից, գոնե ռուսը օրենք ու սիրտ ունի: Այն ժամանակ ռուսի ձեռքի տակ, որպես մի ամբողջություն, կզարգանանք ու կաճենք... Այս շատ լավ կլինի: Ես այսուհետև ինձ կպատրաստեմ մի զինվոր, ուրիշ զինվորների հետ արյուն կթափեմ ռուսի դրոշակի տակ և հայրենիքս կփրկեմ կրակից ու արյունից ու սովից[2]:

Հաղթահարելով երկարատև տեղատվությունը՝ քսաներորդ դարասկզբի առաջադեմ Ռուսաստանը մոտենում էր 1905 թ. հեղափոխությանը՝ գիտակցված ձեռք մեկնելով և միավորելով կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի հեղափոխական ուժերը: Ռուսական առաջին հեղափոխության տարիներին հայ գրողներից և հրապարակախոսներից շատերը գրչով մարտնչել են հանուն հեղափոխության հաղթանակի:

Որոշակի ռուսական կողմնորոշում ունեին ոչ միայն արևելահայ, այլև արևմտահայ գրողները՝ Արփիար Արփիարյանը, Լևոն Բաշայանը, Երվանդ Օտյանը, Արշակ Չոպանյանը և ուրիշներ: Հաղթահարելով երկարատև տեղեկատվությունը՝ XX դարասկզբին առաջադեմ Ռուսաստանը մոտենում էր 1905 թ. հեղափոխությանը՝ գիտակցված ձեռք մեկնելով և միավորելով կայսրության ժողովուրդներին, այդ թվում՝ հայ ժողովրդի հեղափոխական ուժերը: Ռուսական հեղափոխության տարիներին հայ գրողներից և հրապարակախոսներից շատերը գրչով մարտնչում էին հանուն հեղափոխության հաղթանակի: Այդ փոթորկոտ օրերին, քննադատելով մանրբուրժուական քաղաքական հոսանքների և կուսակցությունների հարմարապաշտությունն ու սոցիալիստական ֆրազաբանությունը, բանաստեղծ Վահան Տերյանը գրեց, որ իր համար սոցիալիզմը մտերմության, եղբայրության ամենաբարձր ձևն է, ոչ թե արյունակցական, այլ հոգևոր, ֆիզիկական (տնտեսական), բարոյական եղբայրության, որ սոցիալիզմը անհատի անսահման ազատությունն է և դրանով իսկ հաստատում է իրեն: Ահա թե ինչու ինքը սոցիալիստ է: Եվ եթե սոցիալիզմը անհատին տար միմիայն նյութական ազատություն, ինքը երբեք սոցիալիստ չէր դառնա:Պատահական չէ բանաստեղծի լուրջ շրջադարձը՝ մի շատ կարճ ժամանակամիջոց ՀՅԴ-ին հարելուց մինչև այն դատապարտելն ու նրանից հեռանալը: (Վ. Տերյանը ռուսական առաջին հեղափոխության սկզբում հարել է Դաշնակցությանը, այն համարելով սոցիալիստական կուսակցություն, և հեռացել է, երբ համոզվել է, որ այդ կուսակցությունը ոչ մի, նույնիսկ հեռավոր առնչություն չունի սոցիալիզմի հետ):

---

[2] **Իսահակյան Ավ.,** *Երկեր, Ե., 1994, էջ 596:*

Ռուսական առաջին հեղափոխության պարտությանը հաջորդած ժամանակաշրջանը, երբ նորից արծարծվում էր Հայկական հարցը, Վ. Տերյանը համարեց ազգային և հասարակական կյանքի հնարավոր ճգնաժամի և մեծ սպասումների բեկումնային շրջան հայ հասարակական մտքի կողմնորոշման որոնումների ճանապարհին:

Վ. Տերյանը հանդես եկավ «Հոգևոր Հայաստան» ծավալուն հոդվածով, որի առանցքն այն գաղափարակռվանն էր, թե հայ ժողովրդի գոյության և հարատևման նեցուկը նրա հոգևոր ու մտավոր կյանքի՝ լեզվի, գրականության, պատմության և այլ արժեքների պահպանումն ու զարգացումն են: Այդ հոդվածում Վ. Տերյանը դիմագրավում էր նաև ցարիզմի՝ փոքր ազգերին ձուլելու քաղաքականությանը: Բանաստեղծը միաժամանակ մտահոգված էր Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդրով: Նա ցանկանում էր Հայկական հարցի արմատական լուծում: «…Ամեն մի մարդու համար, - գրել է Վ. Տերյանը, - այդ հարցը սրբազան մի ավանդ է դարձել, նվիրական մի տվայտանք, ամեն մի հայ մարդու առջև ծառացել էր իր եղերական արյունաներկ պատկերով: Մի՞թե կարող ենք սառնասիրտ լինել մենք, երբ այժմ դրված է այդ հարցը, երբ կանգնած ենք նրա այս կամ այն լուծման հանդեպ: Մի՞թե իրավունք ունենք մենք տարակուսելու կամ տատանվելու, պետք է հավատալ, պետք է հուսալ լիասիրտ, պետք է տենչալ սրտի բոլոր զորությամբ և մեր բոլոր կարողությամբ ձգտել, որ այժմ վերջնական կերպով լուծվի այդ արյունալվիկ հարցը»[3]:

Վ. Տերյանը արևմտահայության փրկությունը չէր կապում մեծ տերությունների քաղաքականության կամ նրանց բորբոքած պատերազմների հետ: Ընդհակառակը, նա դրանք բնութագրում էր որպես հայ ժողովրդի համար աղետաբեր և կործանարար:

Հավատարիմ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշմանը՝ Վ. Տերյանը արևմտահայության ազատագրումը կապում էր գալիք դեմոկրատական Ռուսաստանի հետ:

1914 թ. աշնանն իր «Նամակներ հեռվից» նոթերում, որոնք ուղարկում էր «Մշակ» թերթին, գրում էր. «Նոր չէ, որ հայությունը պիտի վկայե իր համակրությունը և ձգտումը դեպի Ռուսաստանը: Դա մի պատմական ավանդություն է արդեն մեզ համար: Մեր ժողովուրդը բնազդով միշտ զգացել է իր փրկության ուղիղ ճանապարհը, և մեր մտավորականության լավագույն ներկա-յացուցիչները արտահայտել են այդ զգացմունքը շատ պարզ ու ցայտուն կերպով»[4]:

---

[3] **Վ. Տերյան,** *Երկեր, Ե., 1989, էջ 338:*

[4] *Մշակ, N 229:*

1915 թ. Վ. Տերյանը հրապարակեց «Մեր պարտքը» հրապարակախոսական հոդվածը, որի մեջ ընդգծում էր, թե այսօր մեծ ժողովուրդները գերագույն լարումով հավաքում ու համախմբում են իրենց տարբեր խավերն ու հատվածները, որ առավել դյուրին դիմագրավեն պատեհ և անպատեհ արհավիրքներին: Եթե մեծերն են այդպես վարվում, ապա փոքրերի համար նման քայլն ավելի քան անհրաժեշտ է: Հայ ժողովուրդը պետք է համախմբի իր ուժերը, քանի որ նրա առջև դրված է ոչ միայն մշակութային կամ հասարակական առաջընթացի, այլև ֆիզիկական գոյության խնդիրը: Անհրաժեշտ է մոռանալ անձնական և կուսակցական տարաձայնությունները և համախմբվել՝ վերահաս վտանգի առաջն առնելու: Հարկավ «միամտություն կլինի կարծել,-շարունակում է Տերյանը,- որ հնարավոր է ընդմիշտ վերացնել մի հասարակության միջից տարբեր հատվածների ընդհարումը: Հակամարտ ուժերի բախումով է առաջ ընթանում կյանքը: Բայց այժմ, երբ պահը կրիտիկական է, պետք է միանան իշխանն ու բանվորը: Կանցնի արհավիրքը, և նորից նրանք կանջատվեն, կկռվեն: Սակայն արհավիրքի ժամին հանցանք և մահացու մեղք է ջլատել ուժերը անջատական զգացմունքներով և գործողություններով»[5]:

Վ. Տերյանն առաջարկում էր ազգային արժեքներին և ավանդներին հավատարիմ մտավորականությանը՝ կազմակերպել, համախմբել հայ հասարակության տարբեր շերտերը, ընտրել իր միջից համազգային մի մարմին, օժտել նրան ժողովրդին ղեկավարելու լիազորություններով և ազգովին դիմագրավելով արհավիրքին՝ փրկել նրան անխուսափելի կործանումից: Բանաստեղծի համոզմամբ՝ համազգային այդ ձեռնարկումից պետք է հեռու վանել նրանց, ովքեր, զանազան եպիսկոպոսների փողերի հովանու տակ գերադասում են գնալ հին ծեծված ճանապարհով՝ կռվի դաշտ ուղարկել աշխատավոր ժողովրդի հայրենասեր զավակներին՝ իրենց հորջորջելով ազգի առաջնորդներ:

Վ. Տերյանի և՛ պատերազմի նախօրյակին, և՛ պատերազմի ընթացքում գրած հոդվածները տոգորված են հայրենիքի ճակատագրի հանդեպ ունեցած սաստիկ ցավով և վսեմ սիրով՝ քաղաքացիական կրքոտությամբ: Ելնելով նախապատերազմյան տագնապալից, աշխարհի վերաբաժանման համար ստեղծված ահեղ ռազմաքաղաքական իրողությունից՝ Վ. Տերյանը Հայկական հարցի լավագույն ելքը համարում էր առաջիկա պատերազմում արևմտահայկական նահանգների ազատագրումը ռուսական բանակների կողմից, հայրենիքի երկու մասերի միավորումը ապագա դեմոկրատական Ռուսաստանի հետ սերտ դաշինքի մեջ: 1914 թ.

---

[5] **Վ. Տերյան,** *հ. IV, Ե., 1925, էջ 199:*

ապրիլի 14-ին Թիֆլիսի երաժշտական ընկերության դահլիճում կարդացած «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ Վ. Տերյանը գրել է. «Ես Տաճկահայկական հարցի լուծմանը Թուրքիայի սահմաններում չեմ հավատում: Լավագույն լուծումն այդ հարցի համարում եմ Ռուսիայի գրավումը տաճկահայկական նահանգների: Այս դեպքում գուշակողի դեր չեմ ուզում ստանձնել, կարող է պատահել, որ այդ հարցը (որ մեր ժողովրդի համար մի ահագին դժբախտություն է դարձել) այլ կերպ կլուծվի: Սակայն լավագույն լուծումն այդ հարցի ես համարում եմ ռուսական տիրապետությունը: Եթե դա հնարավոր է՝ ուրեմն մեր ժողովրդի երկու հատվածների միացումով ավելի ևս կզորեղանա այն կուլտուրական հոսանքը, որ փափագելի է ինձ համար, եթե չլինի այդ, ապագայում էլ մենք պետք է ձգտենք այդ միացման: Տաճկաստանի վերածնության ես չեմ հավատում, իսկ Ռուսաստանի ապագան ինձ համար աներկբայելի է: Եվ կապելով իմ լավագույն հույսերը ռուս առաջավոր դեմոկրատիայի հույսերի և իմ բաղձանքները նրա բաղձանքների հետ, ես չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու»[6]:

Հանուն առաջադիմության և ազգային համախմբման՝ հայ ժողովրդի համար բացառիկ նշանակություն պիտի ունենար Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը: Վ. Տերյանը կարծում էր, որ, հանուն ազգային համախմբման, հայ ժողովրդի ջանքերը հեղափոխության ազդեցությամբ ստանալու են նոր որակ՝ ազգային և սոցիալական վերածնության ուղղվածություն: Հենց այդ համոզմունքից ելնելով էլ Վ. Տերյանը արևմտահայության ազատագրության իր ծրագիրը հիմնավոր ու բովանդակալից շարադրեց 1917 թ. նոյեմբերին Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին (ՌԺԿԽ) ներկայացրած «Թուրքահայաստանի մասին» զեկուցագրում «Докладная записки о Турецкой Армении»): Վերլուծելով արևմտահայության մղձավանջային անցյալն ու ներկան, բնութագրելով Օսմանյան կայսրության կողմից շարունակվող վարքագիծը և իմպերիալիստական տերությունների շահամոլ քաղաքականությունը՝ զեկուցագրում նշվում էր Հայկական հարցի լուծման ուղին:

Վ. Տերյանի զեկուցագիրը այդ ծրագրի իրագործման համար անհրաժեշտ էր համարում ինչպես բռնի կերպով Միջագետքի և Թուրքիայի այլ վայրերը արտաքսված, այնպես էլ Ռուսաստանում գտնվող գաղթականների և Ամերիկա և այլ երկրներ գաղթած բոլոր հայերի համար հայրենիք վերադառնալու հնարավորություն ստեղծելը:

Լոկ այս երաշխիքներն ապահովելու դեպքում կարելի է խոսել Հայաստանի իսկական ինքնորոշման մասին: Այլապես հայ ժողովրդի

---

[6] **Վ. Տերյան,** *Երկեր, Ե., 1989, էջ 327:*

ինքնորոշման մասին ամեն մի խոսակցություն կինչի որպես դատարկ զրույց:

Վ. Տերյանի զեկուցման հիման վրա 1917 թ. դեկտեմբերի 29-ին Սովետական Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն ընդունեց «Դեկրետ Թուրքահայաստանի մասին» փաստաթուղթը, սակայն, ցավոք, այնտեղ տեղ չէին գտել Վ. Տերյանի վերջին առաջարկությունները, հատկապես ռուսական զորքերը դուրս չբերելու մասին առաջարկությունը: Պատահական չէ, որ այդ դեկրետը Հայկական հարցի գալիք արծարծումներում առանձնապես ոչ մի դերակատարություն չունեցավ:

Հիշենք դեպքերի զարգացման հետագա ընթացքը՝ Մուստաֆա Քեմալ Աթաթուրք - Վ. Ի. Լենին մերձակցության հետևանքները: Սակայն հատկապես չմոռանանք նաև, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո անդրկովկասյան հակահեղափոխական կուսակցությունները մեծ տերությունների ամենաեռանդուն աջակցությամբ ստեղծեցին Սովետական Ռուսաստանի դեմ պայքարի լայն ճակատ՝ «հակասովետական կոալիցիա», որի գործիքն էր «Անդրկովկասյան կոմիսարիատը» (1918 թ. փետրվարից՝ «Անդրկովկասյան սեյմը»):

Այսօր էլ արդիական խորհուրդ ունի Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու հակահեղափոխական կուսակցությունների՝ դաշնակցության, վրաց մենշևիկների և ադրբեջանական մուսավաթականների քաղաքականության սինթեզ՝ Անդրկովկասյան կոմիսարիատի որոշումը մերկացնող Վ. Տերյանի՝ 1918 թ. գրած «Նամակներ հայ գյուղացիներին ու բանվորներին» հոդվածը: «Կովկասում, - գրել է Վ. Տերյանը, - Բաքվից այն կողմը դեպի Թիֆլիս, Երևան, Գանձակ իշխանությունն իրենց ձեռքն էին առել թուրք բեգերի շահը պաշտպանող մուսավաթ կուսակցությունը, վրացի ազնվականների օգուտը պաշտպանող մենշևիկներն ու հայ սուտ սոցիալիստ, հայ գյուղացու պաշտպան ձևացող կարճիկյանների կարճատես կուսակցությունը, այսինքն՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը: Եվ այն ժամանակ, երբ Ռուսաստանի բանվորա-կան և գյուղացիական կառավարությունը զինաթափ էր անում աղաներին..., ահա այդ նույն ժամանակ Կովկասի «կառավարությունը, որն, ինչպես ասացինք, բաղկացած էր վրացի մենշևիկ կեղծ սոցիալիստներից, սուտ դեմոկրատ դաշնակցականներից և թուրք բեգերից, զինաթափ էր անում... ռուս զորքերին և նրանց զենքերով զինում թուրք բեգերի գնդերը, այդ կառավարությունը զենք ու փամփուշտ էր գյուղացիների ու բանվորների դեմ կռվող Կոռնիլովին ու Կալեդինին, իսկ երբ այդ վերջինները ջախջախվեցին ու ընկան, Ռուսաստանի սոցիալիստական զորքերը սկսեցին մոտենալ Կովկասին, նրանք այդ դավաճան չխենկելիները,

խանխոյսկիները և խատիսյանները Կովկասը Ռուսաստանից անկախ, բաժանված հայտարարեցին... Եվ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների հետ միանալու փոխարեն, կարճամիտ դաշնակցականները միացան թուրք բեգերի ու վրացի ազնվականների շահը պաշտպանող ավազակների հետ»[7]:

Անդրկովկասում լիակատար տիրապետություն հաստատելու և Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարը դյուրացնելու և ընդարձակելու համար 1918 թ. մայիսի 26-ին հարկադրաբար ցրված «Անդրկովկասյան Սեյմի» փոխարեն ստեղծվեցին բուրժուաազգայնական խամաճիկային հանրապետություններ: Արարատյան հանրապետության երկուսնկես տարվա գոյության ընթացքում հայ ժողովրդի արևելյան հատվածը ևս կանգնեց լիակատար ոչնչացման առաջ: Հարցականի տակ դրվեց հայ ժողովրդի գոյությունը: Այդ տագնապով են լեցուն ժամանակի մամուլի հաղորդագրությունները, պաշտոնական գրագրությունները:

Խախտելով Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական Կովկասյան բանակի և երրորդ թուրքական բանակի հրամանատա-րությունների միջև 1917 թ. դեկտեմբերի 5-ի Երզնկայի զինադադարը՝ թուրքերը փետրվարի 10-ին անցնում են հարձակման: Նվաճած շրջաններում երիտթուրքական զորքերն անխնա ոչնչացնում էին հայերին՝ շարունակելով նախորդ տարիների իրենց հայաջինջ քաղաքականությունը: Շուտով անգլիական գաղութարարների և մուսավաթականների համատեղ գործակցությամբ տապալվում է Բաքվի կոմունան: Այնուհետև իրար են հաջորդում մայիսյան ապստամբության ճնշումը, Սևրի դաշնագիր կոչված խաբեությունը, թուրք-հայկական պատերազմը և թուրքերի նոր բարբարոսությունները, մինչև 1920 թ. նոյեմբերի վերջին Արարատյան հանրապետությունում հաստատվում է խորհրդային իշխանություն՝ ամենուրեք արժանանալով հայ գրականության մեծերի լիակատար աջակցությանը:

Վ. Տերյանը չապրեց մինչև այդ պահը, սակայն իր ողջ ստեղծագործական, հասարակական գործունեությամբ, իր ժողովրդի ապագայի մասին տանջալից մտորումներով դիմավորեց 1917 թ. ռուսական երկու հեղափոխությունների ալեկոծումները, մանավանդ Հոկտեմբերյան հեղափոխության սոցիալական և ազգային հավասարության կարգախոսները: Գտնվելով հեղափոխության բուն սրտում՝ Պետրոգրադում, հիվանդ բանաստեղծը չխնայեց իր ուժերն ու կյանքը, նետվեց մեծ դեպքերի շրջապտույտի մեջ: Նա դարձավ Կոմունիստական կուսակցության

---

[7] *Նույն տեղում, էջ 370-372:*

անդամ, ընտրվեց Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի կազմում: Վ. Տերյանը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ապրեց ընդամենը երկու տարի, և զարմանալ միայն կարելի է, թե ինչքան շատ գործ կատարեց այդ կարճ ժամանակամիջոցում: Ղեկավար աշխատանք Ազգությունների ժողկոմատի Հայկական կոմիտեում, մասնակցություն Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններին՝ որպես Հայկական գործերի խորհրդական, մարքսիստական գրականության թարգմանություն, հիմնարար հրապարակախոսական հոդվածներ՝ ահա այսպիսին էր բանաստեղծի վերջին երկամյա գործունեության ոչ լրիվ պատկերը: Կյանքը իր ժողովրդին անմնացորդ նվիրումի մեջ անբուժելի հիվանդ Վ. Տերյանը սպառում էր վերջին կենսաուժը, բայց իրեն «լուսավոր ու ջինջ» էր զգում, քանզի Հայկական հարցի ազգանպաստ լուծման համար կատարում էր ամեն հնարավորը:

Քաղաքացի բանաստեղծի սրտին խորունկ ցավ էր պատճառում դաշնակցական ղեկավար գործիչների գործելակերպը, որոնք Հայկական հարցի լուծումը տարան համազգային շահից խոտորված ճանապարհով: Համաշխարհային առաջին պատերազմի նախաշեմին և պատերազմի առաջին ամիսներին հայ ժողովրդի լայն շերտերում կրկին ճառագեց ազատագրության հույսը: Ոգևորվելով ցարական կառավարության սուտ խոստումներով՝ հայության մեջ լայն արձագանք ստացավ կամավորական շարժումը, որի նպատակն էր ռուսական զենքի օգնությամբ ազատագրել թուրքական բռնատիրության ճիրաններում տառապող արևմտահայությանը: Հազարավոր հայրենասերներ՝ ժողովրդի անվեհեր զավակներ, խմբվելով կամավորական գնդերում, միամտաբար կարծում էին, թե ցարիզմը վստահելի նեցուկ կլինի հայ ազատագրական շարժման ուխտին և պաշտպան կկանգնի արևմտահայության ճակատագրին: Այդ հավատը նրանց ներշնչում էին դաշնակցական կարճատես քաղաքագետները, որոնք, անցյալից դասեր չքաղելով, դաշինք կնքեցին ցարիզմի հետ և մեկ անգամ ևս սխալվեցին:

Հայ ազգային գործիչները չկարողացան օգտագործել ռուսական գործոնը, ղեկավարել ժողովրդի ազատագրական շարժումը և կազմակերպել անգամ Արևելյան Հայաստանի ինքնապաշտպանությունը՝ այս անգամ արդեն քեմալականներից: Վերոհիշյալ, ինչպես նաև դաշնակցական քաղաքագետների արևմտյան կողմնորոշման արդյունքը նկատի ուներ Վ. Տերյանը, երբ գրում էր, թե «քանի դեռ Եվրոպայում իշխանությունը գրտնվում է իմպերիալիստների ձեռքին, հայերը չեն կարող... բարենպաստ վերաբերմունք հուսալ եվրոպական պետությունների կողմից»[8]:

---

[8] *Նույն տեղում, էջ 397:*

Հայկական հոգևոր արժեքների պահպանման և հարցի լուծման տերյանական խոր ու ծանրակշիռ հարցադրումները այսօր էլ արդիական նշանակություն ունեն և շոնդալից ապտակներ են պատեհապաշտ և արկածախնդիր քաղաքագետներին:

ВААН ТЕРЬЯН И АРМЯНСКИЙ ВОПРОС

САРУХАНЯН Н. Б.

Резюме

Вопросы исторических судеб армянского народа, поиски путей его возрождения занимали важное место в творчестве и общественной деятельности Ваана Терьяна. Решение Армянского вопроса – освобождение западных армян от турецкого ига– В. Терьян еще до начала Первой мировой войны 1914-1918 гг. связывал с грядущими социально-политическими переменами. Наилучшим исходом он считал освобождение западноармянских областей с помощью русских войск. После Октябрьской революции, будучи членом ВЦИК и ответственным работником Комиссариата по делам национальностей, В. Терьян прилагал огромные усилия, чтобы защитить исторические права армянского народа. В ноябре 1917 г. он представил Совету Народных Комиссаров Докладную записку о Турецкой Армении, в которой подробно говорилось о потерях западных армян, ставился вопрос о гарантиях их безопасности и праве на самоопределение. В этот же период В. Терьян неоднократно встречался с В. И. Лениным, принимал участие в разработке проекта, на основе которого был принят декрет о Турецкой Армении. В начале 1918 г. В. Терьян в составе советской делегации участвовал в мирных переговорах в Брест-Литовске в качестве советника по армянским делам.

VAHAN TERYAN AND THE ARMENIAN QUESTION

N. SARUKHANYAN

Abstract

The questions of the historical destiny of the Armenians, the search of the ways of its resistance had an important place in the oeuvre and public activities of Vahan Teryan. The solution of the Armenian Question and first of all - the liberation of the Western Armenia - Vahan Teryan even before the WWI linked with the coming social-political changes in the world. He considered as the best option the liberation of the Western Armenia by the Russian army, unification of the two Western and Eastern parts of Armenia under a deep cooperation with democratic Russia.

From the first days of the October revolution Teryan as a member Central Executive Committee and a staff member of the Commissariat of nationalities made great efforts for protecting the historical rights of the Armenians. In November 1917 he presented his “Report on Turkish Armenia” to the Council of People’s Commissars where he gave data on the loses of Western Armenians and rose questions on future guarantees for self-determination. At the same time Teryan took part in creating a report which became a draft for the “Decree on Turkish Armenia” (December 29, 1917). In the beginning of 1918 as a member of Soviet delegation Teryan took part in peace negotiations in Brest-Litovst, where he was an advisor on the Armenian issues.